

Միրան Հովհաննիսյան

Սոցիալական աշխատանքի մագիստրոս

Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի արտաքին և հասարակայնության հետ կապերի պատասխանատու

Ֆեմինիստական տեսություններ

Հոդվածների այս շարքում փորձ է արվում ներկայացնել ֆեմինիստական տեսությունները, որոնք մինչ այս հայտնի են կանանց, ֆեմինիստական, կանանց և/կամ գենդերային հետազոտությունների (ուսումնասիրությունների) շրջանակներում: Այս շարքի առաջին հոդվածը նվիրված է ֆեմինիզմի լիբերալ տեսության՝ լիբերալ ֆեմինիզմի առանձնահատկություններին, հիմնադիրներին, պատմությանը, ինչպես նաև դրա քննադատական մոտեցումներին: Հոդվածները կարող են օգտագործվել և որպես ընդհանուր տեղեկատվության աղբյուրներ, և որպես կրթական նյութեր:

Լիբերալ ֆեմինիզմ

Ֆեմինիստական այս տեսությունը քննարկելիս կարևոր է այն առանձնացնել “քաղաքական լիբերալիզմ” հասկացությունից, քանի որ այն հաճախ կարող է շփոթվել քաղաքական հայացքների ձախ գաղափարախոսության հետ: Դիանա Դի Նիտոն¹ առանձնացրել է այն հասկացությունները, որոնք սովորաբար օգտագործվում են քաղաքական գաղափարախոսությունները բնութագրելու համար. ռադիկալ, լիբերալ, միջին, կոնսերվատիվ, ռեակցիոնիստական:

Լիբերալիզմի քաղաքական փիլիսոփայությունը նկարագրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերջինիս պատմությունը: Լիբերալ փիլիսոփաները, ում աշխատությունների վրա հիմնվում է լիբերալ ֆեմինիզմը համարվում են Ջոն Լոկը (1632-1704) և Ժան-Շակ

¹ DiNitto, Diana (1995) *Social Welfare: politics and public policy*. 4th edition, Boston, MA: Allyn & Bacon.

Ռուստոն (1712-1778): Մակայն, մինչ այս տեսության առանձնահատկություններին անցնելը, անհրաժեշտ է քննարկել առնվազն հետևյալ երեք գաղափարները:

Նախ և առաջ, կարևոր է քննարկել Նյուտոնյան հայեցակարգի ազդեցությունը, որի համաձայն ֆիզիկական տիեզերքը գործառնում է պարզ, ռացիոնալ, ֆիզիկական օրենքների հիման վրա՝ այսինքն՝ բոլոր նշանակալի իրադարձություններն ունեն որևէ պատճառ: Ցանկացած այլ երևույթ, իր կամ նյութ, որը չի գործառնում այս գաղափարի շրջանակներում, բնութագրվում է որպես երկրորդական կամ “ուրիշ”:² Երկրորդ, հարկավոր է հստակ հասկանալ, որ Լոկը և Ռուստոն, խոսելով “մարդու” իրավունքների (rights of man) մասին, առաջ էին տանում մասնավորապես միապետների և արիստոկրատների իրավունքները զանգվածների կառավարման գործում՝ առանց որևէ կերպ խթանելու բոլոր մարդկանց իրավունքների՝ որպես քաղաքացիական ազատությունների կարևորությունը: Այս մոտեցումը հիմնված էր հատկապես տղամարդկանց քաղաքական մասնակցության խթանման վրա, ովքեր համարվում էին սեփականություն (ունեցվածք) ունեցողներ:³ Երրորդ, Լոկը համոզված էր, որ այն բնութագրիչները, որոնք վերագրվում են մարդուն (տղամարդուն), նրա մարդկային յուրահատուկ ունակությունն են հիմնավորելու, ինչը, ըստ էության, կապված չէր վերջինիս ունակությունների կամ անընդունակությունների հետ: Մարդու (տղամարդու) ներքին արժանապատվությունը և արժեքը նրա բանակության առկայության մեջ էր:⁴

Ինչպես նշում է Ջագգարը⁵, արդարության մասին լիբերալ գաղափարները հիմնված են այն հայեցակարգի վրա, որ հասարակությունը կազմված է առանձին անհատներից, որոնք մրցակցում են ռեսուրսների արդար (ացի) բաշխման համար: Լիբերալները փաստում են, որ պետք է թույլ տալ անհատներին իրացնել իրենց ինքնավարությունը և բավարարել կարիքներն այնպես, ինչպես իրենք են դրանք սահմանում:⁶ Այնուամենայնիվ, նման իրավիճակին հասնելը բարդ է սահմանափակ ռեսուրսների պայմաններում. երբ անհատները փորձում են ունենալ այնքան ռեսուրս, որքան իրենց պետք, դժվարանում է այն

² Donovan, Josephine (1985) *Feminist theory: The intellectual traditions of American feminism*. New York: Frederick Ungar Publishing

³ Eisenstein, Hester (1983) *Contemporary feminist thought*. Boston, MA: G.K.Hall & Company

⁴ Jaggar, Allison (1983) *Feminist politics and human nature*. Totowa, NJ: Rowman and Allanheld

⁵ Տես՝ Jaggar, Allison (1983).

⁶ Tong, Rosemarie (1989) *Feminist thought: A comprehensive introduction*. San Francisco, CA: Westview Press

ինստիտուտների ձևավորման գործընթացը, որոնք պատասխանատու են անհատի ազատության մաքսիմալացման համար՝ առանց վնասելու համայնքի բարեկեցությանը:⁷

Լիբերալ ֆեմինիստները նշում են, որ հասարակությունը ոտնահարում է կանանց հավասար իրավունքների արժեքը՝ հատկապես կանանց որպես խումբ, այլ ոչ առանձին անհատներ դիտարկելով:⁸ Նրանք պահանջում են, որ կանայք ունենան միևնույն իրավունքները, ինչ տղամարդիկ:

Լիբերալ ֆեմինստական տեսության հիմնադիրները բազմաթիվ են՝ ներառյալ Մերի Ուոլստոնկրաֆտը, Ջոն Ստյուարտ Միլը, Հերիեթ Թեյլորը և Էլիզաբեթ Քեյդի Ստենտոնը:⁹ Լիբերալիզմը ոչ միայն ռադիկալ, այլ նաև գենդերային հեռանկարի տեսանկյունից դիտարկել են Ջոզեֆին Սեն Պիեր Ռաֆինը, Աննա Ջուլիա Կուպերը, Իդա Ուելսը, Ֆրենսիս Հարպերը և այլոք:¹⁰

Տեսաբանները շարունակել են ուսումնասիրել լիբերալ ֆեմինիզմի խնդիրները վերջին երեք դարերի ընթացքում: Դեռևս 18-րդ դարում Ուոլստոնկրաֆտը¹¹ վերացրեց կանանց կրթության և տնտեսական հնարավորությունների խոչընդոտները: 19-րդ դարում լիբերալ ֆեմինիստները արդեն պայքարում էին կանանց քաղաքացիական իրավունքների համար:¹² Արդեն 20-րդ դարում լիբերալ ֆեմինիստները կենտրոնանում էին հասարակական հիմնախնդիրների վրա՝ անձնականի փոխարեն: Այս փուլում նրանք պայքարում էին քաղաքական հավասարության, վերարտադրողական իրավունքների համար: Իսկ ավելի ուշ շարժումները կենտրոնանում էին կանանց համար որաշակի սոցիալական ծառայությունների անհրաժեշտության վրա կանանց և տղամարդկանց միջև հավասարության գաղափարի հիման վրա:

Քննարկումներն այն մասին՝ արդյոք սեռը կամ ռասան հանդիսանում են ճնշումների էական աղբյուր, երկու տարբեր բանակների էր բաժանել սևամորթ և սպիտակամորթ կանանց

⁷ Տե՛ս՝ Tong, Rosemarie (1989)

⁸ Jaggar, Allison (1983) *Feminist politics and human nature*. Totowa, NJ: Rowman and Allanheld

⁹ Eisenstein, Zillah (1981) *The radical future of liberal feminism*. Boston, MA: Northeastern University Press

¹⁰ Donovan, Josephine (1985) *Feminist theory: The intellectual traditions of American feminism*. New York: Frederick Ungar Publishing

¹¹ Wollstoncraft, Mary (1967) *A vindication of the rights of women*. New York, The New Press

¹² Eisenstein, Zillah (1981) *The radical future of liberal feminism*. Boston, MA: Northeastern University Press

թե 19-րդ և թե 20-րդ դարերում:¹³ Բացի այդ այն նաև տարրանջատումներ է առաջացրել ֆեմինիստական տեսությունների մի քանի ճյուղերում, ինչպես նաև լիբերալ ֆեմինիզմում: 1890-ականներին Ջոզեֆին Սենտ Պիեր Ռաֆինի կողմից ստեղծված սևամորթ կանանց ակումբները¹⁴ պայքարում էին ռասայական և սեռերի միջև հավասարության համար՝ վերախմաստավորելով “իրական կանացիությունը”, որը ներառում էր բոլոր սևամորթ կանանց՝ առանց դասային տարրանջատումների:¹⁵ 1800-ականների վերջին սևամորթ և սպիտակամորթ կանանց կազմակերպությունների միջև տարբերությունները բնութագրվում են Ֆաննի Բարիեր Ուիլիամսի կողմից. “Սևամորթ կանանց ակումբերը ձևավորվում են մի քանի բանիմաց և իրավասու կանանց կողմից՝ ավելի քիչ կամ ոչ կոմպետենտ կանանց խրախուսելու համար: Սպիտակամորթ կանանց համար նմանատիպ ակումբները վերելքի, առաջընթացի աղբյուր են”:¹⁶

Այս հոդվածի շրջանակներում Լիբերալ ֆեմինիզմի դիրքորոշումները հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրվում են հետևյալ հիմնական ոլորտներում.

1. Մերիտոկրատիա¹⁷ և կնոջ հիմնավորման ունակություն (բանականության առկայություն)
2. Կրթություն
3. Աշխատանք
4. Քաղաքացիական իրավունքներ և քաղաքական հավասարություն
5. Վերարտադրողական իրավունքներ
6. Սոցիալական ծառայություններ

Մերիտոկրատիա և կնոջ հիմնավորման ունակություն: Վաղ ժամանակաշրջանի ֆեմինիստները, ինչպիսիք են Ուոլստոնկրաֆտը և Ստենտոնը գտնում էին, որ հասարակության կողմից անհատին վերագրվող իրավունքները, կարգավիճակը,

¹³ Joseph, Gloria (1981) *The incompatible ménage a trois: Marxism, feminism and racism*. In Lyndia Sargent (Ed.) *Women and revolution*. Boston, MA: South End Press

¹⁴ Davis, Angela (1990) *Women, culture & politics*. New York: Vintage Books

¹⁵ Giddings, Paula (1988) *When and where I enter*: New York: Bantam

¹⁶ Տե՛ս՝ Giddings, Paula (1988) p.98

¹⁷ Մերիտոկրատիան համակարգ է, որի միջոցով մարդիկ պարզևատրվում են իրենց անձնական ձեռքբերումների (օրինակ կրթական մակարդակ), այլ ոչ թե խմբային բնութագրիչների (ազգություն) հիման վրա:

ռեսուրսները և պարզևատրումները հիմնվում են մարդու՝ հիմնավորում տալու ունակության կամ բանական մտքեր արտահայտելու հանգամանքի վրա, և փաստում էին, որ կանանց և տղամարդկանց բանական մտքեր արտահայտելու ունակությունները հավասար են:¹⁸ Կանանց և տղամարդկանց հիերարխիկ բաժանումը շարունակվում էր թույլատրվել, չնայած ռացիոնալության և ձեռքբերումների վրա հիմնված արդար մերիտոկրատիայի օգտին լիբերալիզմի փաստարկների. հասարակությունում կանանց տեղը բնորոշում էր նրանց ֆիզիկական ունեցվածքը մտավոր կարողությունների փոխարեն:¹⁹ Հիմնվելով Լոկի՝ մարդու ռացիոնալության տեսության վրա, այս ֆեմինիստները փաստում էին, որ կանանց և տղամարդկանց միջև ֆիզիկական տարբերությունները կարևորություն չունեն, քանի որ մարդիկ ի սկզբանե ռացիոնալ են: Լիբերալ ֆեմինիստները փաստում են, որ լիբերալ արժեքները ոտնահարվում են, երբ կանայք բնութագրվում են ֆիզիկական, այլ ոչ թե մտավոր կարողություններով:²⁰ Փոխարենը լիբերալ արժեքները պետք է տարածվեն մերիտոկրատիայի օգտին անհավասարությունները վերացնելու համար:²¹

Կրթություն: Ուղղատնկրաֆտը գտնում է, որ եթե կանայք և տղամարդիկ դաստիարակվեն միևնույն կամ հավասար պայմաններում և կանայք ունենան կրթության նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, ապա նրանց միջև տարբերությունները կարող են վերանայ: Շարունակելով այս միտքը՝ վաղ շրջանի լիբերալ ֆեմինիստները պայքարում էին կրթություն ստանալու հավասար հնարավորությունների՝ որպես սոցիալական փոփոխության ամենաարդյունավետ միջոցի համար:

Աշխատանք: “Կնոջ աշխատանքը” (երեխաների խնամքը, տնային աշխատանքը, “հմտություններ չպահանջող աշխատանքը”) հիմնականում նվիրված է մարմնի խնամքին և պահպանմանը: Կնոջ բնութագրումը իր վերարտադրողական և տնային աշխատանքի դերերի սահմաններում ուղեկցում են նրան աշխատուժի մեջ և նպաստում են աշխատանքի գենդերային բաժանմանը:²² Երբ կանայք ընդունվում են աշխատանքի, նրանք դիտարկվում են ավելի շուտ որպես խնամողներ, քան հավասար աշխատակիցներ: Այդ իսկ պատճառով

¹⁸ Jagger, Allison (1983) *Feminist politics and human nature*. Totowa, NJ: Rowman and Allanheld

¹⁹ Eisenstein, Zillah (1981) *The radical future of liberal feminism*. Boston, MA: Northeastern University Press

²⁰ Jagger, Allison (1983) *Feminist politics and human nature*. Totowa, NJ: Rowman and Allanheld

²¹ Nes, Janet and Iadicola, Peter (1989) Toward definition of feminist social work: A comparison of liberal, Radical, and socialist models. *Social work*, 34 (1), 12-21

²² Eisenstein, Zillah (1981) *The radical future of liberal feminism*. Boston, MA: Northeastern University Press

նրանց տրվում են խնամողների դերեր և ցածր վարձատրվող աշխատանք: Կանայք ցածր են վարձատրվում անգամ, երբ կատարում են նույն աշխատանքը, ինչ տղամարդիկ: Լիբերալ ֆեմինիստները մատնանշում էին այս անհավասարությունները և պնդում, որ կանանց պետք է հասանելի լինեն այն աշխատանքները և վարձատրությունը, որոնք հասանելի են տղամարդկանց: “Հավասար վարձատրություն հավասար աշխատանքի համար”-ը դարձավ այն կարգախոսը, որով կանայք պայքարում էին այդ անհավասարությունների դեմ:

Քաղաքացիական իրավունքներ և քաղաքական հավասարություն: Լիբերալ ֆեմինիստները ակտիվորեն պայքարում են քաղաքացիական հավասարության հաստատման համար, սակայն բոլոր կանայք նույն ձևով չեն մոտենում իրավիճակին: Օրինակ՝ ընտրության իրավունքի դեպքում սպիտակամորթ կանայք կենտրոնանում են *կանանց*, իսկ սևամորթ կանայք՝ *համընդհանուր (universal)* ընտրական իրավունքների վրա:²³ Մեր օրերում լիբերալ ֆեմինիստական պայքարը կանանց և տղամարդկանց միջև քաղաքական հավասարության համար զարգացել և տանաձվել է մինչև պայքար կանանց հանրային և քաղաքական ներկայացուցչականության հնարավորությունների համար: Լիբերալ ֆեմինիստները գնահատում են նաև ընտրական գործընթացների քաղաքականությունը, ինչպես նաև աջակցում են այն տղամարդ-թեկնածուներին, ովքեր նպաստում և աջակցում են կանանց հիմնախնդիրների լուծմանը:²⁴

Գենդերային խտրականության վերացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացման ուժերը կենտրոնանում են նաև հասարակության այն անդամների իրավունքների և շահերի պաշտպանության և նրանց աջակցության վրա, ովքեր խտրականության են ենթարկվում ռասայի կամ սեռական կողմնորոշման հիման վրա:²⁵

Վերարտադրողական իրավունքներ: Իրենց գործունեության ընթացքում լիբերալ ֆեմինիստները ավելի շատ պայքարել են սեփական մարմինը կառավարելու կնոջ իրավունքի համար: Սեռական դաստիարակության, հակաբեղմնավորիչների օգտագործման, ինչպես նաև հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ իրավունքների հասանելիությունը

²³ Giddings, Paula (1988) *When and where I enter*: New York: Bantam

²⁴ Jaggar, Allison (1983) *Feminist politics and human nature*. Totowa, NJ: Rowman and Allanheld

²⁵ Nes, Janet and Iadicola, Peter (1989) Toward definition of feminist social work: A comparison of liberal, Radical, and socialist models. *Social work*, 34 (1), 12-21

համարվում են անկյունաքարային: Այնուամենայնիվ վերարտադրողականության կառավարման իրավունքների համար պայքարը բոլոր կանանց չբերեց միևնույն շահը: Այդ շրջանում լիբերալ ֆեմինիստները գտնում էին, որ գենդերային խտրականությունը գոյություն ունի անգամ այն դեպքում, երբ հակաբեղմնավորիչների արգելքը բաշխված էր “հավասարապես”: Նրանք փաստում էին, որ քանի որ կինն է հղիացող և երեխային անմիջականորեն խնամող կողմը, ապա անհամապատասխան տեղեկատվությունը և հակաբեղմնավորիչների անհասանելիությունը վնասում են հատկապես կանանց, քան տղամարդկանց, և հետևաբար սերմանում են սեռերի նկատմամբ անհավասար վերաբերմունք:

Սոցիալական ծառայություններ: Սոցիալական կառուցվածքները տղամարդուն շնորհում են իշխանություն, հեղինակություն և ֆինանսական պարզևատրումներ:²⁶ Ի հակադրություն իրենց նախորդների՝ ժամանակակից լիբերալ ֆեմինիստները իրենց գաղափարախոսության շրջանակներում փորձում են զարգացնել լիբերալիզմի էգալիտար մոդելը²⁷, բարեկեցության պետության կապիտալիզմը և առավել ընդունելի մերիտոկրատիան²⁸: Լիբերալ ֆեմինիստները պահանջում են, որ պետությունն իրականացնի այնպիսի սոցիալական փոփոխություններ, որոնք կամրապընդեն կանանց համար հավասար հնարավորությունները: Նրանք փաստում են, որ կանանց համար իրենց իրավունքների իրացումն ավելի հասանելի դարձնելու համար պետությունը պետք է աջակցի նրանց ճգնաժամային իրավիճակներում խորհրդատվական ծառայություններով, բռնության ենթարկված կանանց համար ապաստարաններով, ինչպես նաև ինցեստի և/ կամ բռնաբարության դեպքերում խորհրդատվական ծառայություններով: Այս ծառայությունները մեր օրերում ներառված են բարեկեցության պետության գաղափարախոսության մեջ, իսկ որոշ երկրներում հանրային ֆինանսավորումը ապահովում է դրանց գործունեությունը:²⁹

Այգենշտայնը մատնանշում է կանանց և տղամարդկանց տարբեր վերաբերմունքն ու դիրքորոշումները լիբերալ օրենքի նկատմամբ, որը ձգտում է պաշտպանել տղամարդկանց

²⁶ Tong, Rosemarie (1989). *Feminist thought: A comprehensive introduction*. San Francisco, CA: Westview Press.

²⁷ Տե՛ս՝ Tong, Rosemarie (1989)

²⁸ Տե՛ս՝ Nes, Janet and Iadicola, Peter (1989)

²⁹ Տե՛ս՝ Jaggard, Allison (1983)

գերիշխանությունը և կանանց սուբորդինացիան:³⁰ Անգամ այն դեպքերում, երբ կանայք, թվում է, կարողանում են դրսևորել իրենց, մի շարք իրավիճակներում նրանք դուրս են մղվում բարձր վարձատրվող աշխատանքներից, ինչպես նաև սահմանափակվում են նրանց առաջխաղացման հնարավորությունները:

Քննադատություն: Լիբերալ ֆեմինիզմի ամենակարևոր քննադատություններից մեկը ինչպես տեսության, այնպես էլ պրակտիկայի շրջանակներում, առաջ եկավ 1800-ական թվականներին, երբ ընտրական իրավունքի համար պայքարող սպիտակամորթ լիբերալ ֆեմինիստները անտեսում էին սևամորթ կանանց պահանջները, իսկ վերջիններս հիմնականում պայքարում էին ռասիստական նկրտումների դեմ: Այս տեսակի “բացառման” ավանույթը շարունակվում էր նաև նախորդ դարի ընթացքում:³¹

Երկար ժամանակ աղքատ և սևամորթ կանանց հիմնախնդիրները դուրս էին մնում լիբերալ ֆեմինիստների ուշադրության շրջանակներից: Բացի այդ այս տեսության քննադատությունը ուներ ևս մեկ փաստարկ. հատկապես նախորդ դարի 70-ական թվականների լիբերալ ֆեմինիստները քննադատության էին ենթարկվում այն պատճառով, որ բացարձակապես անուշադիր էին երեխաների խնամքի հետ կապված առանձնահատկությունների նկատմամբ:

Այնուամենայնիվ, իրական մարդկային էակները արստրակտ անհատներ չեն, այլ մարդիկ, ովքեր պատկանում են որևէ ռասայի, սեռի կամ տարիքի, ովքեր ունեցել են և ունեն տարբեր կյանքեր և փորձեր, մասնակցում են սոցիալական հարաբերությունների տարբեր համակարգերի գործունեությանը, ունեն տարբեր կարողություններ և կարիքներ:³²

³⁰ Տե՛ս Eisenstein, Zillah (1981)

³¹ Տե՛ս Donovan, Josephine (1985)

³² Տե՛ս Jaggard, Allison (1983)

Օգտագործված գրականության ցանկ

1. Davis, Angela (1990) *Women, culture & politics*. New York: Vintage Books
2. DiNitto, Diana (1995) *Social Welfare: politics and public policy*. 4th edition, Boston, MA: Allyn & Bacon.
3. Donovan, Josephine (1985) *Feminist theory: The intellectual traditions of American feminism*. New York: Frederick Ungar Publishing
4. Eisenstein, Zillah (1981) *The radical future of liberal feminism*. Boston, MA: Northeastern University Press
5. Eisenstein, Hester (1983) *Contemporary feminist thought*. Boston, MA: G.K.Hall & Company
6. Giddings, Paula (1988) *When and where I enter*: New York: Bantam
7. Jagger, Allison (1983) *Feminist politics and human nature*. Totowa, NJ: Rowman and Allanheld
8. Joseph, Gloria (1981) The incompatible ménage a trois: Marxism, feminism and racism. In Lyndia Sargent (Ed.) *Women and revolution*. Boston, MA: South End Press
9. Nes, Janet and Iadicola, Peter (1989) Toward definition of feminist social work: A comparison of liberal, Radical, and socialist models. *Social work*, 34 (1), 12-21
10. Saulnier, F. Christine, *Feminist Theories and Social Work*, Approaches and Applications, The Haworth Press, Inc., 2000
11. Tong, Rosemarie (1989) *Feminist thought: A comprehensive introduction*. San Francisco, CA: Westview Press
12. Wollstoncraft, Mary (1967) *A vindication of the rights of women*. New York, The New Press